


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԱՍՏԱՏՈՒՄԾ
ԿՐՕՆԻՔ**

Կրօնքը՝ իր լայն առումով և է՛ն կարճ սահմանով Աստուծոյ հետ հարադասից կեանքն է. Իսկ կեանքը տեւական փոփոխութիւններու, իր ընդհանուր գիծին մէջ աստիճանական զարգացումներու շարք մ'է։ Բայց շատ մը արեւելիքներ յառաջ կուգան՝ որոնք կ'սպառնան կեանքը միօրինակ, մեքենական, անոգի դարձնելու։ Ասոնցմէ մէկն է թիւր ըմբռնումած հեղինակութիւնը. այն հեղինակութիւնը՝ որ միշտ արտաքին է և չի գտնուիր մարդուն ներքին ապրումներուն մէջ. այն հեղինակութիւնը՝ որ չի բերիր մարդուն մէջ ներբընակող Աստուծոմէ։

Մարդկային տկարութիւն մ'է շատ անգամ կուրօրէն հետեւիլ արտաքին ազդեցութիւններուն։ Մարդը շատ անգամ կը միտի ընդօրինակել ուրիշներուն մտածումները, սովորութիւնները, կեանքը։ Ան կը թողու որ ուրիշները չափին, ձեւին կեանքը իրին համար։ Անոր ազօթքը շատ անգամ փոխառնում է բացատրութիւններ ևն, զորոնք ըմբռնելու կարողութիւններ չունեն։ Կրօնական դադափարները ուրիշներէն զուրկում բառեր ևն, որոնց տարրութիւնը կշռելու ունակութիւնը չէ մշակած։ Անոր

կեանքը ինքնարուզի մշտանոս ազդիւր մը չէ, այլ արտաքին ազդակներով զործող մեքենայ մը։

Շատ անգամ քրիստոնեայ եկեղեցին ինքը պահանջած է որ քրիստոնեաներու հոգեւոր կեանքը հաստատուի արտաքին հեղինակութեան վրայ։ Եկեղեցին շատ անգամ ջանացած է պարտադրել իր աստուածային պատգամներ՝ իր գաղափարները, որոշումները սխալ կամ շիտակ, քրիստոնէական կամ հեթանոսական, աւետարանական կամ հակաաւետարանական։ Ասոր իբր արդարացուցիչ պատճառ մը թերեւս պիտի յիշուի քրիստոնէական ուղղափառութիւնը անվթար պահելու նախանձայնութիւնը և հերետիկոսութիւնը արգիլելու ջիւղ փափաքը։ Բայց քրիստոնէութիւնը անաղարտ պահելու և հակաաւետարանական հերձուածողութեան տեղի չտալու համար՝ լաւագոյն միջոցն է ստեղծել այնպիսի մթնոլորտ մը, ուր հոգիները կարենան սնանիլ ուղղակի Քրիստոսէ, ուր հաւատացեալները ատակ ըլլան անխափան ընդունելու աստուածային Լոյսը, որուն միջոցաւ պիտի կարողանան ըմբռնել և զնահատել եկեղեցին և անոր դաւանանքը, Ս. Գրոց պատգամները, հոգեւոր արժէքները, և ոչ թէ կռթնել արտաքին հեղինակութեան մը լրայ։

Բերոր եկեղեցիները անխտիր և ամէն գաւառանքի պատկանող շատ մը կրօնական ու-

առջնորդներ փորձուած են քրիստոնեաները կապել իրենց և ոչ թէ Քրիստոսի, և պահանջած են որ մարդիկ խորհին, գգան, արտայայտուին իրենց պարտադրած ձևերուն համեմատ: Բոլոր եկեղեցիները, բոլոր հոգևոր առաջնորդները, բոլոր գրութիւնները պէտք է դէպ ի Քրիստոս ուղեցոյցի պաշտօնը կատարեն միայն՝ ազատ ձգելով անհատը որ ներքնակեալ Լոյսի, Ս. Հոգիի, միջոցաւ տեսնէ, ըմբռնէ ու գնահատէ բոլոր հոգևոր իրերը, եկեղեցին, առաջնորդը և գրութիւնները:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԻՆՔՆԱՄՓՈՓՄԱՆ ԽՈՀԵՐ

Կեանքը Ինքն Իր Մէջ

Բ.

Ինչո՞ւ կը յուսահատինք, մանաւանդ ինչո՞ւ շուտ կը յուսալքուինք: Գիտենք որ կեանքը խաղաղ և երջանիկ դարձնելու համար յոյսը անոր աղն ու համն է, առանց որոյ տաժանակիր աշխատութեան մը տխուր և բացասական տպաւորութիւնը պիտի թողուր այն մեզի: Կեանքի գիտակցութեան չեմքին վրայ կանգնող պատանին կամ պատանուհին և անոր ամբողջ ծանրութիւնը իր ուսերուն վրայ կրող ծերունին ու պառաւը, երկուքն ալ ունին իրենց յոյսերը, իրենց երազները, իրենց գաղափարականները և իրենց պաշտամունքը. մին՝ ապագայի ոսկեհուռ երազներով, իր կազմելիք ընտանիքին յարանորոգ տեսիլներով կը դիւթուի, և այդ բնագոյրէն 15-16 էն վերջ կ'արթննայ արդէն իր մէջ, իսկ միւսը՝ գերեզմանին դուռը հասած, կը հմայուի աշխարհի մէջ իրենց թողուցած գաւազներուն և թողնելուն բախտաւոր կեանքովն ու երջանկութեամբ: Մին իր երազներու ծովափը նստած ալեաց հետ կը ծփծփայ, թռչնոց հետ կը թրվռայ, աստղերուն հետ կը պսպլայ և սոխակին հետ կը դայլայէ, իսկ միւսը, ցրտաշունչ քամիին հետ կը պղպղայ, աշնան հետ կը թռչնի, ձմեռան հետ կը վառամի ու կը ննջէ, բայց երազի մարգարտահիւս երիզը միշտ իր գալիսցած մատներուն մէջն է:

Ուրեմն, ինչո՞ւ կը յուսահատինք: Շատեր կը բաղձան ապրիլ օրերու մէջ, նման

հին բարի՛, բարի՛ օրերուն, կարենալ կրելու համար կեանքի լուծը և ծառայելու համար այլոց: Անոնք նախ՝ չեն գիտեր թէ անցեալի այդ կարծեցեալ բարի՛ բարի՛ օրերը, դժուարութեանց և դժբախտութեանց ինչ կոյտեր դիպած էին ժամանակին ապրող սերունդներուն առջև, որովհետեւ անցուկը շուտ մոռցուկ կ'ըլլայ և անցնող օրուան գէշը չ'ըլլար կ'ըսէ առածը: Իսկ ապագային համար խաղաղ օրեր ակնկալելով մեր պարտականութիւնները բարձի թողի ընել, բացարձակ ինքնախաբէութիւն մըն է, որովհետեւ, այն որ իր այսօրուան պարտքը չի կրնար կատարել, անկարող եւ անճրկած դժուարութեանց առջև, չի կրնար նաեւ մարդուած եւ եփուած գուրս գալ վաղուան համար: Անոնք թուլամորթներ են, որոնք կեանքի իրենց պարտականութիւնները կատարել կարենալու համար նախ պայման կը դնեն հարթուած եւ պատրաստ դետին մը, կենսութեան եւ անփոթորիկ երկինք մը, անխարակ եւ անալիք ծով մը. բայց բանն այդպէս չէ՝ աշխարհի վրայ բարեբախտաբար, որովհետեւ ճիշդով չահուած հացն է ամենէն համեղը եւ հիթէ ջանքի եւ աշխատանքի քաղցրութիւնը չըլլար, համն ու հոտը փախած պիտի ըլլար կեանքին:

Մեր զործունէութեան ասպարէզը մե՛նք ենք որ պիտի հարթենք, եւ ամենաքաղցր վայելքը կեանքին՝ այդ յաղթանակին մէջ կը կայանայ: Յաղթէ՛ ներկայի արգելքին ահա՛ ապագան աւելի ապահով և յուսալից պիտի ժպտի քիզի. աշխատէ՛ միշտ երիտասարդանալու եւ կորովի, ոյժերդ վերանորոգելու, որովհետեւ ժամանակը շուտով ծերացնելու պիտի աշխատի քեզի. ծաղրէ անոր այդ յաւակնութիւնները, ահա՛ ապագան քուկդ է. նեղութեան եւ յուսալքումի մէջ ծուներ դի՛ր Արարչիդ առջև, հայցէ՛ Անոր ամենագոր առաջնորդութիւնը եւ ահա՛ անբացատրելի ոյժէ մը մղուած կը վերսկսիս պայքարիդ: Հակառակ պարագային չկատարուած պարտականութեանց պարտքերուն տակ պիտի կքիս, որովհետեւ այդ անտեսուած եւ չյաղթայաբուած դժուարութիւնք, նոր թուլացումներու եւ անկարողութեանց պիտի ենթարկեն մեզի, ջլատելով մեր ոյժերը, ստեղծելով նոր բարդութիւններ եւ գոցելով մեր առջև առնն ճամբայ եւ կամուրջ:

Ինչպէս անհատին, նոյնպէս հաւաքակա-
նութեան մը համար նոյնն է պարագան. ի՞նչ
են յեղափոխութիւնները. — Ժամանակին չկա-
տարուած պարտքերու և չլուծուած հարցերու
ծառացումը, ըմբոստացումը, պոռթկումը:
Որովհետեւ անոնք իբրեւ չարիք կը ճնշեն այլ-
եւս ընկերութեան վրայ, որուն տակ հեղձա-
մահ կորնչելու մղձաւանջէն սարսափող հա-
մայնքը, ոտքի կ'ելլէ եւ իր իշխանին երեսն
ի վեր կը պոռայ — կատարէ՛ դիւլուած պարտա-
կանութիւններդ, իթէ ոչ կը կործանեմ ամեն
ինչ. մեռայ այլեւս... Եթէ բոլոր ընկերա-
յին կարիք և պարտականութիւններ, բարե-
նորոգումներ եւ բարեշրջութիւնք ճիշդ ժա-
մանակին կիրարկուէին, վստահ կրնայինք
ըլլալ որ յեղափոխութիւններն վերջ գտած
պիտի ըլլային աշխարհի վրայ: Այսպէս է
անհատին համար, ա'յսպէս է համայնքին հա-
մար, ա'յսպէս է եկեղեցիին համար, ա'յսպէս
է, թէ՛ եկեղեցին կազմող և թէ անոր առաջ-
նորդող անհատներուն համար. չխաբուինք,
չծածկենք վէրքերը չ'արհամարհենք բարենո-
րոգումները, չ'անտեսենք օրուան պահանջը-
ները, առժամեայ, երեսութեան և խափու-
սիկ լուծութիւնը մեր ուշադրութենէն թող չը
վրիպենք այս ճշմարտութիւնը: Ապագան՝
խաբուողէն աւելի վիտա՛կյաբար թերացողին
վա՛յ պիտի կարգայ:

Ուրիշ խնդիր մըն ալ. կրնա՞ն երկու եւ
աւելի պարտականութիւններ իրարու բախիլ
և մենք կարո՞ղ ենք մէկը միւսին զոհել: Այ-
սինքն կրնա՞ն պարտականութեանց երկու օ-
ղակներ միաժամանակ ներկայանալ մեզի կամ
հակամարտիլ իրարու: Հոս ալ ինքնախա-
բէութիւն մը կրնայ ծագիլ: Անհատը կամ
համայնքը մէկ վայրկեանի մէջ երկու պար-
տականութիւններ չի կրնար ունենալ, որոնք
իրարու հակասեն, զիրար չեզոքացնեն. մեր
բանականութիւնը յստակօրէն կը մատնանշէ
վայրկեանին պահանջքը բայց մեր հակումնե-
րը, միտումները, բնազդը եւ յաճախ չար
զրգիւններ կը շփոթեն ու կը մոլորեցնեն միտ-
քըն ու բանականութիւնը, զոհելու համար
հրամայողականը եւ հետեւելու համար կիր-
քերու ուղիին: Ուրեմն, մարդկային անա-
ռակ հակումներն են որ մարմին կուտան այդ
երեւակայածին հակամարտութեան: Եթէ
խաբուինք այդ տնտեսական բախումէ մը եւ պար-

տականութիւն մը զանց առնենք ի նպաստ
ուրիշի մը, մեղանշած կ'ըլլանք մեր հոգւոյն
վեհ եւ ազնիւ, բնական եւ աստուածային
ներշնչումներուն դէմ, զոհն ըլլալով մեր աշ-
խարհի եւ ստորին կիրքերուն ու բնազդնե-
րուն: Եւ երկրորդ այդ տեսակ բախումներ
և հակամարտութիւններ կրնան խանգարել
մեր բնականոն գնացքը, իբր անցեալի մէջ
զանց առնուած պարտականութիւն մը այս
օրուան մեր պարտքին հետ միասնաբար կը
ներկայանան, շփոթի մատնելով մեր գործը,
որուն պատճառը կրկին անհատին կամ հա-
ւաքականութեան անցեալի թերացումն է:
Ասիկա պիտի նմանէր այն ապագային, յո-
րում անցեալի մէջ չվճարուած պարտքի մը
տէրը եւ այսօրուան առնելիքօրը երկուքը
մէկ կը ներկայանան մեզի եւ մենք չկարե-
նալով երկուքն ալ միաժամանակ զոհացնել,
կը կարծենք թէ շիտակ պիտի ըլլայ մին զո-
հել ի նպաստ միւսին եւ ականջ զոցել առաջ-
նոյն բողոքներուն:

Ուստի՝ կրնանք եզրակացնել թէ, ապար-
դիւն եւ յուսահատական կը դառնայ մեր
կեանքը երբ մեր պարտականութեանց ամեն
օրեայ կիրարկման մէջ թերանանք եւ այդ
պարտքերու կատարման ժամանակ մեր հա-
կումներուն ու կիրքերուն անսանք: Եթէ
անփորձ ենք այս մասին չյամարինք որ ամ-
բողջ կեանքերնիս ապարդիւն դառնալէ վերջ
ինքնամոփոփունք եւ անգրագառնանք մեր
ահաւոր սխալներուն. այս է մեզի փորձառու-
թեան ուղղած պատգամը երկնատուր:

Հայեայ

ՌՇՏՈՒՆԻ

=ՎԵՐՋ=

ՔԻՍՍԱՊԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՈՎԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԻ ՀԱՄԱՌՕՏ ՄԷԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հակառակ անոր որ աչքառու հնութիւն
մը ունի՛ր այս եկեղեցին՝ այս օր շատ քիչ տե-
ղեկութիւն ունինք ի ձեռին անոր պատմու-
թիւնը հիւսելու համար. հազիւ կրնանք ա-
նոր պատմութեան ընդհանուր գիծերը ար-
ձանագրել: Մեզի կը հաւաստեն թէ մեծ
Պատերազմէն առաջ՝ շատ մը կարեւոր տե-
ղեկութիւններ արձանագրուած կային եկե-
ղեցոյ տետրակին մէջ: Բայց սոյն տետրակը
դժբաղդաբար տեղահանութեան առթիւ կոր-

տուած կամ փճացած ըլլալով՝ մինք մեր տեղեկութիւնները կը քաղենք բողոքական երկրորդ սերունդին վերապրող մի քանի անհատներէն:

Ըստ նոցա վերի վերոյ ութսուն տարուայ պատմութիւն մը ունի սոյն եկեղեցին: Աւետարանական շարժումը կը սկսի «Յակոբ Վարժապետ» ով, հաւանաբար Մալաթիացի կամ Տիյարպէքիրցի: Յիշեալը, թէպէտ պաշտօնապէս Լուսաւորչական՝ աւետարանական ճշմարտութիւններով լուսաւորուած, և թեւեւ դադարապէս ալ բողոքական մ'ըլլալով՝ տակաւ լուիկ մննչիկ կը լուսաւորէ և կը ներշնչէ իր շուրջը բոլորուող անհատները: Ժամանակի ընթացքին՝ ստեղծուած շարժումը ուշադրութիւն կը հրաւիրէ և Յակոբ Վարժապետ կը վնասուի, կամ հալածանքի արդիւնքով կը ստիպուի Քէսապը ձգել և փախչիլ:

Չենք գիտեր թէ որչափ ետքը՝ աւետարանական պաշտօնով Այնթապցի «Քէօսէ Աստուր Խօճա» Քէսապ կը զրկուի, որու օրով Աւետարանական Եկեղեցին պաշտօնապէս կը սկսի Քէսապի մէջ: Բողոքականութիւնը առաջին ընդգրկողները կ'ըլլան Ապտուլա Պապուկ, Յովսէփ Յովսէփեան, Պէտիր Արէլեան, Կարապետ Ծահպաղեան, Յակոբ Մահչիկեան (Վեր. Ս. Մահչիկեանի հայրը), և Սողոմոն Քէլաղուպեան: Շուտով ասոնց կը միանայ նաև Տէր Մարկոս քահանան որ «Արամու» անունով գիւղին քահանան էր, և ըստ ոմանց Քէսապի մէջ ալ պաշտօնավարած էր:

Առաջին աղօթարանը կը հաստատուի գիւղին կեդրոնական մէկ վայրը (արդի Անդրանիկ Ինճէճիքեանի տունը): Հոգ կը մնան մինչև 1859, երբ կը կառուցուի արդի փլուտակ եկեղեցին, որ հրոյ ճարակ եղաւ Կիլիկիան կոտորածի առթիւ:

Թէպէտև խիստ հոանդուն և անկեղծ՝ Աւետարանական համայնքը այնքան պզտիկ էր այդ շրջանին, որ իրենց սրտաբուխ աղօթքն էր, «Տէ՛ր, տուր մեզի այնքան ժողովուրդ որ ամբողջ փսիւթ մը պատէ»:

Աւետարանական շարժումին հետ միաժամանակ կը սկսի նաև հալածանքը, որ հետզհետէ աւելի սուր հանգամանք կը ստանայ: Բողոքականները ամէն կողմէ կ'անարգուին և կ'անիրաւուն: Ապտուլա Պապուկի զըլխուն լողքարը ձգելու համար երեք օր տա-

նիքին վրայ կը սպասեն. բայց նա անոնց չար զիտարորութիւնը հասկնալով դուրս չ'ելլեր: Օր մը Յակոբ Մահչիկեանը ճամբէն խելով ձոր մը կը տանին, ուր իր զգեստովը կրկին և կրկին ջուրին մէջ թաթխելով ու հանելով զայն բողոքականներու մկրտութիւնը կը ծաղրեն: Յակոբի հալածիչներէն մէկն ալ իր խկ կինը կըլլայ: Օր մը երբ Յակոբ անօթի գրսէն տուն կուգայ և կերակուր կը խնդրէ, կինը բարկութենէն բռնկած՝ պնակը կը բարձրացնէ և կերակուրը Յակոբին գլուխն ի վար կը թափէ: Բայց հետզհետէ կինը և բոլոր զաւակները Բողոքականութիւնը կ'ընդունին:


Մասնաւոր հալածանքի ենթակայ կ'ըլլայ նաև Տէր Մարկոս, չոր սպաննելու համար տունը կը յարձակին, բայց նա կը խուսափի: Հալածանքի պատճառաւ կը ստիպուին հարսանիք և պսակ միշտ գիշեր ատեն ընել:

Քէօսէ Աստուր Խօճան ալ ատեն մը ամին վտանգ անգոսնելով ջերմեռանդօրէն ծառայիլէ յետոյ՝ վերջապէս զոհ կերթայ հալածանքի: Իր բնակարանը յարձակելով կը բռնեն, գետն ընդ քարչ մինչև գիւղին եզերքը կը տանին և գիւղէն կը վնասեն:

Բայց շարժումը Աստուծոյ էր, ուստի ամէն հալածանք ապարդիւն անցաւ: Եկեղեցին հետզհետէ կը մեծնար և կը կազմակերպուէր: Առաջին մկրտութիւնը Կարապետ Մահչիկեանի վրայ (Պետրոսին հայրը) կատարուեցաւ:

Միսիօնարները զործին կարեւորութիւնը հասկնալով զործը ուղղակի իրենց ձեռքը առին: Քէսապի մէջ առաջին զործող միսիօնարը եղած է Մր. Կուտէլ: Յետոյ յաջորդաբար Մր. Մօրկան, Մր. Փափլօս, Տր. Սէլ, Տր. Նօթինի և Մր. Էտէմս զործը շարունակած են:

Տեղացի հոգեւորականներէն գլխաւորաբար հետեւեալները յիշուած կարգով պաշտօնավարած են: 1. Պատ. Աւետիս Փօլատեան, 2. Պօղոս Խալֆէ (2-3 տարի), 3. Վեր. Սիմոն Թէրզեան (5-6 ամիս), 4. Վեր. Ստեփան Մահչիկեան Քէսապ ձեռնադրուած և տասը տարիէ աւելի չոն պաշտօնավարած է: 5. Վեր. Յ. Պիւլպիւլեան (այն ատեն ոչ ձեռնադրեալ) 1881 և 1882 տարիները քարոզած է: 6. Վեր. Կիրակոս Ժամկոչեան (2-6 տարի) 7. Վեր. Յ. Գումրուհան Քէսապ ձեռնադ-



ՎԵՐ. ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

բուժած և 5-6 տարի պաշտօն վարած է: 8. ՎԵՐ. Ստեփան Թովմասեան Քէսապ ձեռնադրուած և տասը տարի պաշտօնավարած է: 9. ՎԵՐ. Տ. Գունտապճեան Քէսապ ձեռնադրուած և 8-9 տարի պաշտօնավարած է: 10. ՎԵՐ. Յ. Շնորհօքեան քարոզիչի հանգամանքով երկու տարի պաշտօնավարած է: 11. Ներկայգրողը չորս տարի է ի վեր պաշտօն կը վարէ:

Նախապէս Քէսապի շրջակայ բոլոր գիւղերէն պաշտամունքի համար Քէսապ կը յաճախէին: 1896 ին էր որ էքիզ-Օլուզ Քէօրքիւնէ և գրեթէ միաժամանակ Գալատուրան զատուելով առաջինը անկախ եկեղեցի եղաւ, իսկ երկրորդը Քէսապի եկեղեցիին իբր մասնաճիւղ զատ քարոզիչ և պաշտամունք ունեցաւ:

Մեծ պատերազմէն առաջ Քէսապի եկեղեցին Կիլիկիոյ դաշտին մէջ երկրորդ ամենամեծ եկեղեցիին կը նկատուէր: 2500 ժողովուրդ ունէր. մինչդեռ հիմայ հազիւ 700 կը համրէ իր տետրակներուն մէջ: Իսկ աւելի ցաւալին ան է որ յետագիւմութիւնը շատ աւելի մեծ եղած է որակի տեսակէտով: Կեանքի, ազգութեան և ազգասիրութեան շուրջ նորեւելի և վտանգալից վարդապետութիւններ լռիկ փրօփականտով եկեղեցիէն ի բաց կը քշեն արական սեռը: Անհրաժեշտ կարիք կայ աւետարանական ոգւով տոգորուած կրթական մշակներու որ դպրոցէն ներս և դուրս հովիւին հետ զործակցին նոր սերունդը Աստուծոյ եւ եկեղեցիին համար պատրաստելու: Նոյնչափ պէտք ունինք ճշմարիտ քրիստոնեաներու ազօթքով զործակցութեան:

Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՒՆԵՐ.— Ծնած եմ 1888 ին, հաւանաբար Յուն վար ամսուն մէջ, Սուէտիոյ Եօդուն-Օլուզ գիւղին մէջ: 13 տարեկան էի երբ Այնթապ Կ. Թ. Գողէճ զրկուեցայ: Ֆրէշմէն կարգը աւարտելէ յետոյ տարի մը Քէօրքիւնէի մէջ ուսուցչական պաշտօն վարեցի: Յաջորդ տարի ուսումնաշարունակեցի. յետոյ Ֆարթսլըի մէջ մէկ տարի իւր ուսուցչի-քարոզիչ պաշտօն վարեցի: 1911 ին Գողէճէն և 1914 ին Մարաշու Աստուածարտնական ճեմարանէն ընթացաւարտ եղայ, յորմէ յետոյ առաջին պաշտօնավայրս եղաւ Զէյթուն: Տեղահանուող վերջին կարաւանին հետ ես ալ ընտանեօք ճամբայ զրուեցայ: Ամերիկացիներու միջամտութեամբ յաջողեցայ Այնթապ մնալ: Երկու ամիս յետոյ ծննդավայրս Եօդուն-Օլուզ եկայ: Սուէտիացիներու ապրտամբութեան մասնակցելով ծառայցի իբր ապրտամբութեան վարչական մարմինին ատենապետ եղի: 45 օր կովւ մկելէ յետոյ՝ Մուսա Լեռնէն Բոր-Սաիա փոխադրուեցանք, ուր Քէմրին մէջ չորս տարի հողեւոր պաշտօնս կատարեցի: Վերադարձիս երկու տարի Եօդուն-Օլուզի և Պիթիասի մէջ միասնաբար և երեք տարի Պիթիասի մէջ առանձնաբար պաշտօնավարեցի: Չորս տարի է որ Քէսապի մէջ պաշտօն կը վարեմ:

ԱՂԵՔՍԱՆԴՐԷԹ

Հիւսիսային Սուրիոյ այս նաւահանգիստը իր անունը կ'առնէ Մեծն Աղեքսանդրէն, բայց անոր ներկայ դիրքը չի համապատասխաներ մեծ Մակեդոնացիին ՅՅ3 ին (Ք. Ա.) հիմնած նոյնանուն քաղաքին: Հալէպ Աղեքսանդրէթին կապուած է խճուղիով մը 70 մղոն երկարութեամբ, որ ինքնաշարժով այսօր հազիւ 3.5 ժամուան ճամբորդութիւն մ'է: Խճուղին կ'անցնի Սուրիական Դուռէն, Պէյրանի կիրճէն, որ ռազմապիտական կարեւոր վայր մը և Տէրէ Պէյլիներու ուրջ մը եղած է: 1832 ին Եգիպտացի Իպրահիմ Փաշան զայն գրաւելէ վերջ Կիլիկիան իր առջեւ բաց գտած է:

Ամանոսի մէկ մասը քաղաքը կը շրջապատէ հիւսիսային, արեւմտեան եւ հարաւ արեւմտեան կողմերէն, զրկելով զայն առողջարար հովերու հոսանքներէն: Աշխարհապրական այս դիրքը և մեծ թիւով ճահիճներու գոյութիւնը խիստ ապառուջ վիճակ մը կը ստեղծեն քաղքին մէջ: Բայց վերջին տարիներու ջանքերուն միջոցաւ ճահիճներէն բաւական մասը չորցուած եւ քաղաքը բնակելի վայր մը դարձած է: Ծովեզերքը երկարող լայն ծառուղին, անոր զուգահեռական եւ ուղղահայեաց կերպով ընթացող քա-

ղաքին ուղիղ պողոտաները, բոլոր փողոցներուն ելեքտրական լոյսով լուսաւորումը, քաղաքին գեղեցիկ կանաչութեամբ զարդարուիլը, անոր առատ ջուրը, երոպական ճարտարապետական ոճով շինուող շէնքերը այսօրուն կը մղեն խորհելու թէ Աղեքսանդրէթ կը խոստանայ Սուրիոյ ապագայ գեղեցիկ քաղաքներէն մէկը ըլլալ:

Աղեքսանդրէթ իր 22 գիւղերով 20000 (13000 ը քաղաքին մէջ) բնակչութիւն մը ունի, որուն մօտաւորապէս 4000ը հայեր են: Վերջին մի քանի տարիներու միջոցին հայերը առողջապահական եւ տնտեսական պատճառներով ստիպուած են Սուրիոյ տարբեր մասերը եւ արտասահման հաստատուիլ: Դաշտային գիւղերու եւ քաղաքին կարեւոր մէկ մասին բնակչութիւնը ֆէլլահներէ (աւելի) կը բաղկանայ, որոնք իշխող տարրը կը կազմեն կառավարական պաշտօնէութեան մէջ: Թուրքերը քաղաքին մէջ փոքրամասնութիւն կը կազմեն, նաեւ մեծ մասամբ թրքաբնակ են լեռնային գիւղերը ուր ցանցաւ թիւով հայեր ալ կը գտնուին: Զուտ հայաբնակ գիւղերն են Ֆարթըսլը, Սօղուզ-Օլուզ, Սթըզ Չաթըզ, Մէզկիթ. Էօնիւ, Նարկիզլիք:

Հայերէն բաւական մէկ մասը տաւաշի կը բնակին տախտակաշէն հիւղակներու մէջ: Շատ աւելի խեղճ վիճակի մը մէջ են Հասանպէյլիցիները, 40 ընտանիքի չափ, հաստատուած քաղաքէն 20 վայրկեան հեռու ճախճախուտ գետին մը վրայ, էլմատաղրի ստորոտը, եղէգէ շինուած հիւղերու մէջ: Հասանպէյլիցի քահանայ մը կրօնական պաշտամունք կը կատարէ եղէգաշէն հիւղակի մը մէջ, եւ 20ի չափ տկար, ճանճատենդէ վարակուած մանուկներ կրթութիւն կ'ստանան եղէգաշէն դպրոցի մը մէջ, զոր կը վարէ վարժուհի մը: Տր. Քէնէտի կ'օգնէ այս դպրոցին: Հայ Առաք. համայնքը ունի քարաշէն եկեղեցի մը, որ միւսնոյն տանի իբրեւ դասարան կը ծառայէ Հայ Ազգ. վարժարանին: Վերջինը ունի 50 աշակերտներ՝ երկու վարժուհիներու խնամքին տակ: Հայ Ազգ. մանկապարտէզը ունի 100 պատիկներ երկու վարժուհիներով: Դաղթականներու մանուկներուն մեծամասնութիւնը կը յաճախէ Նուպարեան վարժարան, ուր 300 երկսեռ մանուկներ կը գտնուին 8 ուսուցիչներու հոգա-

ծութեան տակ: Հայ Կաթողիկ հասարակութեան մանուկները կը յաճախեն Գոլէժ տէ Ֆրէր, որ իր փառաւոր շէնքին մէջ կը պարունակէ ամեն ցեղէ 300 աշակերտութիւն մը:

Հայ Աւետ. համայնքը, որ 250 հոգիէ կը բաղկանայ, տակաւին զուրկ է եկեղեցիի շէնքէ մը, եւ իր պաշտամունքը կը կատարէ Արաբ բողոքականներու եկեղեցիին մէջ: Անցեալ տարի դպրոց մը հիմնած են, ուր այս տարի 90 աշակերտներ կը յաճախեն. տախտակաշէն տուն մը իբր դպրոցի շէնք կը զործածուի: Այս համայնքին մէջ եռանդուն եւ զործող երիտասարդութիւն մը եւ հոգեւոր տաքուկ միջոցաւ մը կայ: Կիրակի առտուան պաշտամունքէն անմիջապէս վերջը կ'սկսի աղօթածողով մը եւ նոյն օրը իրիկունը ժամը 7ին հոգեւոր ընկերակցութեան եւ հաղորդակցութեան ժողով մը տեղի կ'ունենայ, ուր 40-50 անհատներ կը խօսին իրենց հոգեւոր փորձառութիւններու մասին, վկայութիւններ եւ աղօթքներ եւ երգեցողութիւններ կ'ընեն: Այս հաւաքոյթը այցելող մէկը անկասկած պիտի զգայ Ս. Հոգիին ազդեցութիւնը:

Աղեքսանդրէթի Հայ Աւետ. եկեղեցիին քարոզիչը Տիար Դէորդ Թումաեան պաշտօնով հրաւիրուած է Գըրըզխան, եւ ներկայիս Հալէպի շրջանին Գործադիր Մարմինը ամէն շաբաթ քարոզիչ մը կը զրկէ հոն հոգեւոր պաշտամունքը կատարելու համար:

ԹՂԹԱԿԻՑ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէյլանի երեք հայ հասարակութիւնները այս տարի միացեալ վարժարան մը բացած են, ուր կը յաճախեն 50ի չափ աշակերտներ. վարժարանը ունի երկամեայ նախապատրաստականի եւ նախակրթարանի երեք տարուան դասընթացքները, կը պաշտօնավարեն վարժուհի մը եւ երկու ուսուցիչներ: Յաջողութիւն այս խիստ գովելի ձեռնարկին համար: Պէյլանի Հայ Աւետ. եկեղեցիին քարոզիչը ուսանելու համար Աթէնք զայցած ըլլալով մի քանի ամսուան համար Տիար Յովհ. Շընորհօքեան հոն պիտի պաշտօնավարէ իբր քարոզիչ:

Գլխավորապես այժմ ունի իր նոր քարոզիչը յանձին Տիար Դէորդ Թումանյանի: Նորաշէն եկեղեցիի շէնքը առ այժմ կը ծառայէ նաեւ իբր զպրոց, ուր 35ի չափ երկսեռ մանուկներ կը կրթուին վարժուհիի մը և օգնականի մը միջոցաւ:

Տեղիս Հայ Առաք. համայնքը Աւետարանական եկեղեցիին մօտ նորակառոյց գեղեցիկ եկեղեցիի շէնք մ'ունի որուն ներքին բարեկարգումը տակաւին չէ կատարուած:

Հայէպի Ազգիկէի Հայ Աւետ. եկեղեցոյ Ե. Ք. Զանից Միութիւնը սկսած է սարքել իր ձմեռնային դասախօսութեան հաւաքոյթները ամեն Դ. շաբթի իրիկուն, երբ օգտակար նիւթերու շուրջ խնամեալ ճառեր կը խօսուին կարող խօսողներու կողմանէ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

ՅԱԿՈԲԻԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հայերէն հոգեւոր Ամսաթերթի մը մէջ գեղեցիկ պատմութիւն մը կարդացի, զոր կ'ուզեմ «Նոր Աւետարեւոր» կարդացող մանուկներուն նուիրել: Կը յուսամ թէ այս պատմութիւնը կարգացողները պիտի կրնան շատ զիւրաւ անոր մէջ եղող հոգեւոր դասը գտնել:

Յակոբիկ 12 տարեկան տղայ մըն էր մայրը շատ բարի ու առաքինի կին մը ըլլալով՝ զայն բարի կեանքով մեծցնելու համար բոլոր ջանք ու աշխատանք չէր խնայեր: Օր մը Յակոբիկի մայրը հիւանդացաւ: Կիւանդութիւնը ամիսներ տեւեց և վերջապէս ըստիպուեցաւ հիւանդանոց փոխադրուիլ: Տէկին Սրբուհի հիւանդանոց փոխադրուելէն առաջ կանչեց իր Յակոբիկն ու ըսաւ. «Ձաւակս, գիտեմ որ ծովը երթալ շատ կը սիրես. այսու ամենայնիւ մայրիկդ կը վախնայ քեզի համար որ բան մը չի պատահի: Խօսք տուր ինձի որ նաւահանգիստ պիտի չերթաս որքան ատեն որ ես հիւանդանոց կը գլտնուիմ, կ'ուզեմ հանդարտ սրտով հիւանդանոց երթալ:

—Մայրիկ, խօսք կուտամ, երբէք նաւահանգիստ պիտի չերթամ: Մի՛ կասկածիր, Յակոբիկդ է որ կը խոստանայ քեզի:

Տէկին Սրբուհի հիւանդանոց փոխադրուեցաւ:

Օրեր կ'անցնէին, Տէկին Սրբուհիի հիւանդութիւնը աղէկնալու ուէ նշան չէր ցուցներ: Յակոբիկ ամեն օր հիւանդանոցին դռնէն կ'անցնէր իր մօր մասին լուրեր առնելու և շաբաթը անգամ մըն ալ վեր կ'ելլէր զինքը տեսնելու:

Բանի մը շաբաթ վերջ Յակոբիկի դասընկերներէն մին լուր կուտար իրեն թէ երկու յածանաւ և երեք ընդժովեայ եկած են նաւահանգիստը, և կը հարցնէր թէ արդեօք Յակոբիկ կ'ուզէ՞ր իր հետ միասին գանձնք տեսնելու երթալ:

—Ձէ, Յովհաննէս, մայրիկիս խոստացայ բնաւ ծովը չերթալ:

—Բայց ի՞նչ վնաս ունի եթէ միայն գանձնք տեսնելով վերադառնաս: Ասոր մէջ անհնազանդութեան խնդիր չիկայ: Ձեք լոգնար: Եթէ մայրիկդ գիտնար անշուշտ հրաման կուտար որ երթայիր...:

Վերջապէս Յակոբիկ փորձութեան մէջ ինկաւ, գնաց ծովը, ու սաստիկ տաքին և իրենց քրտնած ըլլալուն պատճառաւ ծովուն մէջ լողցան ալ:

Յակոբիկ տուն հասած էր բայց խղճի անհանգստութիւն մը կը զգար: Ապահով տուն եկած էր, եթէ նոյն խսկ մայրիկն ալ գիտնալու ըլլար թերեւ չէր բարկանար, սակայն անհրճապանդութեան խորհուրդը զինք կը չարչրկէր: Երկու օր վերջ մայրիկին քով պիտի երթար: Ի՞նչպէս երթար անոր քով, ի՞նչ ըսէր:

Յակոբիկ հիւանդանոց գնաց, բայց վեր չեկաւ: Կիւանդապահուհիին հետ մայրիկին զրկեց փունջ մը գեղեցիկ ծաղիկներ, որ իր խնայած դրամով գնած էր: Մայրը ուրախացաւ ծաղիկներուն համար, սակայն վարձացաւ որ տղան չեկաւ: Օ՛, թերեւս դասերուն համար ստիպուեցաւ չուտ վերադառնալ:

Ութ օրեր անցան, Յակոբիկի սիրտը փոխանակ հանդարտելու աւելի կը վրդովուէր: Այս անգամ գնաց իր մայրիկին, հաստատ ուրոշած էր խոստովանիլ անոր և այնպէս իր խղճի բեռէն ազատուիլ: Գնաց տեսաւ մայրիկը, շատ տկար էր ան, իրաւ թէ և զինքը տեսնելով խնդաց, բայց զօրութիւն չունէր

նոյն խոսքի իմ մանկիկը գրկելու և համբուրելու: Յակոբիկ խղճաց մօրը վրայ, ոչ անկարելի է, չեմ կրնար ըսել, յաւիտեանս կը տառապիմ, բայց մայրիկիս այս տկար վիճակին մէջ հարուած մըն ալ իմ կողմէս իջեցնել չեմ ուզեր:

Բաժնուելու ժամը հնչեց եւ Յակոբիկ մայրիկին համբոյր մը տալով դուրս ելաւ: Սիրտը հանգիստ չէր. սակայն իրմէ աւելի մօրը վրայ խորհիլ սկսաւ: Ինչ պիտի ըլլայ մայրս: Որքան իր մօր մահուան վրայ խորհէր այնքան աւելի կը թանձրանար իր անհրնազանդութեան մեղքին մշուշը իր սրտին վրայ: Օ՛, ինչ ընեմ: Եթէ մայրս մեռնի ի՞նչպէս և որմէ՞ ներդրութիւն պիտի խնդրեմ:

Երկու երեք օր վերջ ալ կեանքը անտանելի եղաւ Յակոբիկի համար:— «Ելլեմ երթամ մայրիկիս և ըսեմ անոր...»:

Յակոբ գնաց հիւանդանոց, բայց ափսոս, մօրը չափազանց տկարութեան պատճառաբոլիչը ամեն այցելութիւն արգիլած էր:

Ինչ ընել...: Բայց պէտք էր ազատուիլ այս անհանգուրժելի վիճակէն: Յանկարծ խորհուրդ մը լուսաւորեց իր փոթորկալից միտքը: Վազեց տուն, քարետախտակը ձեռքըն առաւ, գրեց մէկ երկու տող, խոստովանեցաւ իր անհնազանդութիւնը և անոր տակ գրեց. —

Սիրելի Մայրիկ,

Քեզմէ նամակով կամ խօսքով պատասխան չեմ ակնկալեր, քեզ աշխատցնել չեմ ուզեր, միայն աւրէ ինչ որ քարետախտակին վրայ գրած եմ, այն ստին պիտի հասկնամ թէ ներեցիր ինձ:

Իր անհնազանդութեան համար տանջուող որդիդ Յակոբիկ

Հիւանդապահուհին կարգաց գրութիւնը:

Մայրը իր տկար ձեռքը վերցնելով վախ մատերը թեթեւ մը սահեցուց գիրերուն վրայ:

Հիւանդապահուհին վար իջաւ եւ քարետախտակը անձկանօք սպասող տղուն յանձնեց: Յակոբիկ գիտեց գրութիւնը, աւրուած էր: Ինքը կը տեսնէր իր սիրելի մօրը մատերուն թեթեւ հետքերը որ գեռ կը կենային քարետախտակին վրայ, բայց գիրերը ջնջուած էին. վերջապէս՝ ջնջուած: Օ՛ ինչ թեթեւութիւն մը կը զգար: Այո, թերեւս իր մայրիկը ա՛լ պիտի չտեսնէր, բայց իր հաշիւները փակուած էին անոր հետ: Իր խաղաղութիւնը վրդովող ա՛լ բան մը մնացած չէր իր և մօրը միջեւ:

Երկու օր վերջ Տիկին Սրբուհի մեռաւ, և Յակոբիկ ալ յուղարկաւորներուն հետ իր մայրիկը հողին յանձնելու գնաց: Ազօթեց անոր դամբանին վրայ, լսցաւ իր սիրելի մայրիկին կորուստին վրայ, սակայն ունէր ներքին երջանկութիւն, հո՛ն վերը անհնազանդութիւնը ա՛լ չը պիտի յիշուէր:

Սիրելի պատանի. — գիտե՞ս թէ քեզ վերջովորդ անհնազանդութիւններդ ջնջող Փրկիչ մըն ալ կայ, անոր ձեռքին հետքերը կը տեսնես շատերու կեանքին մէջ, և նոյնը կրնաս քու կեանքիդ մէջ ալ ունենալ: Տես Փրկիչդ ինչ կ'ըսէ:— Եսայի ԽԳ. 25: ԽԳ. 22: Վըստահէ Անոր և Անո՛ր գնա: Ահա Աստուծոյ Գառը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ: ՔՈՒ ՄԵՂՔԴ ԱՆՊԻՏԻ ՎԵՐՑՆԷ: Կուզե՞ս:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հեղինակութեան Վրայ Հաստատուած Կրօնքը

ՅՕԴՈՒՄԻՆԵՐ

Կեանքը Ինքն Իր Մեջ

ՌԵՏՈՒՆԻ

Քեանսի Հայ Աւես. Եկեղեցւոյ Պարմութիւնը

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Աղեքսանդրէք

ԹՂԹԱԿԻՑ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՍՏԱՑԱՆՔ

6. «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ» Հայագիտական ամսաթերթի Ժ. թիւը, հրատարակութիւն Վիէնայի Մխիթարեան Միաբանութեան:

7. «ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» Գրական ամսաթիւր թիւ 12-13 միացեալ պատկերազարդ թիւը, B. P. 602 Պէյրութ, Լիբանան: